



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» *August* 2019թ.

N *ՎՊՂ/170-2019*

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N ՄՈ/160-2019 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2019 թվականի մայիսի 10-ի N 01/07.1/7512-19 գրությամբ:

որոշում եմ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/160-2019 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝
 - որոշմամբ հաստատված N3 հավելվածի 3-րդ կետը լրացնել «Հարությունյան Արմեն» բառերով.
 - որոշմամբ հաստատված N12 հավելվածի 3-րդ կետը լրացնել «Սարգսյան Վարշամ» բառերով.
 - որոշմամբ հաստատված N26 հավելվածի 3-րդ կետը լրացնել «Պետրոսյան Ֆելիքս» բառերով.
 - որոշմամբ հաստատված N38 հավելվածի 3-րդ կետը լրացնել «Սարգսյան Սարգիս» բառերով:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հարգանքով՝

Հ.Մաթևոսյան

